

3.2. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԹԱՑԸ. ՎԵՐԵԼՔՆԵՐԻ ՈՒ ՎԱՅՐԷՋՔՆԵՐԻ ՈՒՂԻՆ

ՄԵՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ
11.08.2021-10.09.2021

Ներածություն: Երկրի ուսումնասիրության արդիականությունը այն է, որ Արգենտինյան զարգացած գյուղատնտեսությամբ երկիր է և կարող է օրինակ ծառայել ագրարային-ինդուստրիալ երկրների տնտեսության զարգացման համար:

Արգենտինյան դաշնային հանրապետություն է՝ բաժանված 23 նահանգների, որոնցից յուրաքանչյուրի կառավարումը իրականացվում է հիմք ընդունելով սեփական սահմանադրությունները:

Ժամանակին եղել է Իսպանիայի գաղութ, բայց շնորհիվ Խոսե Ման-Մարտիի և այլ պայքարողների՝ ազատվել է իսպանական լծից: Այսօր Արգենտինյան զարգացած կապիտալիստական երկիր է՝ հարուստ օգտակար հանածոներով և նավթով, ուրանի մեծ պաշարներով: Պետությունը գտնվում է աշխարհի խոշորագույն երկրների տասնյակում:

Լատինական Ամերիկայի երկրները, այդ թվում՝ նաև Արգենտինյան, զգալի մասնաբաժին ունեն գյուղատնտեսական մթերքների համաշխարհային շուկայում: Այդ երկրները ոչ միայն կարողանում են ապահովել իրենց բնակչության ներքին պահանջմունքները, այլ նաև գյուղատնտեսական արտադրանքի արտահանման գծով զբաղեցնում են առաջնային դիրքեր: 2014 թվականին Լատինական Ամերիկայի երկրների մասնաբաժինը պարենամթերքի արտահանման շուկայում կազմել է 11,5 %¹:

Հարավային Ամերիկայի երկրներից Արգենտինայի և Բրազիլիայի պարենամթերքի արտադրության հատվածը առավել զարգացած է և վերջին տասնամյակում գնալով էլ՝ ավելի զարգանում է՝ նպաստելով արտադրության դիվերսիֆիկացմանը²:

Հողվածի նպատակը: Սույն հողվածի նպատակն է՝ ուսումնասիրել Արգենտինայի տնտեսության առանձնահատկությունները, գտնել նրա ուժեղ կողմերը, որոնք ապահովում են տնտեսության զարգացումը, և կատարել առաջարկություններ Հայաստանում դրանց տեղայնացման համար:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները**.

- ✓ ուսումնասիրել Արգենտինայի տնտեսական զարգացման էվոյուցիան,
- ✓ վերլուծել տնտեսության առավել զարգացած ճյուղերը,

¹ Евразийская экономическая комиссия, Департамент агропромышленной политики, Анализ барьеров доступа сельскохозяйственных товаров на рынок стран Южной Америки, Москва, 2015, стр. 2.

² Սույն տեղում:

✓ բացահայտել Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված նոր ուղիներ:

Գրականության վերլուծություն: 1998 թվականին Միջազգային տնտեսական պատմության կազմակերպությունը Բուենոս Այրեսը ընտրեց որպես 13-րդ հանրագումարը անցկացնելու վայր: Այդժամ տնտեսական պատմաբանները Արգենտինան համարեցին տնտեսական պատմությունների և տնտեսական ցնցումների երկիր¹:

Տնտեսական ցնցումների պատճառով Արգենտինան բնութագրվում է որպես տատանողական տնտեսությամբ և օտարերկրյա ներդրումներից բարձր կախվածությամբ երկիր²:

Մի շարք տնտեսագետներ գտնում են, որ Արգենտինայի հիմնական խնդիրը բյուջեի՝ 20-րդ դարից սկսած դեֆիցիտն է, որի պատճառը դարձավ նախագահ Խուան Դոմինգո Պերոնի վարած պրոտեկցիոնալ քաղաքականությունը³:

Հնդվածում նշված հեղինակների աշխատություններում հաճախ են նշվում Արգենտինայի վերելքների և վայրէջքների մասին: Տնտեսագետները այս պետությունը դասում են այն երկրների շարքին, որտեղ պարբերաբար գլուխ են բարձրացնում տարատեսակ ճգնաժամերը, և երկիրը գտնվում է անընդհատ տնտեսական տատանումների մեջ⁴:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ թեման ուսումնասիրված է, սակայն չկա որևէ աշխատանք, որում կուսումնասիրվեր ՀՀ և Արգենտինա տնտեսական կապը:

Մեթոդաբանություն: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել արտասահմանյան տնտեսագետների համապատասխան ուսումնասիրությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական և տրամաբանական, վիճակագրական և համեմատական վերլուծության մեթոդները:

Կիրառական նշանակությունը: ՀՀ-ն ունենալով գյուղատնտեսության ոլորտում մի շարք խնդիրներ, կարող է տեղայնացնել և ներդնել Արգենտինայի այդ ոլորտում հաջողած փորձը:

Վերլուծություն: Իր պատմության արշալույսից ի վեր Արգենտինան հաղթահարել է մի շարք մարտահրավերներ՝ սկսած անկախության, իսպանական գաղութային համակարգից դուրս գալուն ուղղված պատերազմներից մինչև քաղաքացիական պատերազմներ: Երկիրը անկախացավ, և 1853 ընդունվեց Արգենտինայի Սահմանադրությունը: Դրան հաջորդող 50 տարիների ընթաց-

¹ Р. Кортес-Конде, Экономический кризис в Аргентине: причины и последствия // Экономическая история. Обзорение / Под ред. Л.И.Бородкина. Вып. 10. М., 2005, с.180-182.

² К.Е. Плотникова, Экономическое развитие Аргентины в рамках МЕРКОСУР/ 2017, стр. 7.

³ Г.Н. Вачнадзе, Деловая Аргентина, том III. Экономика и связи с Россией в 2002-03 гг/ 2004, стр. 11,21.

⁴ Р. Кортес-Конде, Экономический кризис в Аргентине: причины и последствия // Экономическая история. Обзорение / Под ред. Л.И.Бородкина. Вып. 10. М., 2005, с.180.

քում Արգենտինան գրանցել է տնտեսական և սոցիալական հաջողություններ՝ ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը համարվելով աշխարհի ամենահարուստ երկրներից մեկը: Արգենտինայի տնտեսական կայունությունը շարունակվեց մինչև 1930 թվականը, երբ տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որի հետևանքով Արգենտինան զարգացած, հարուստ երկրից վերածվեց մեծ ճգնաժամի եզրին գտնվող և թույլ զարգացած երկրի: Այդ տարիներին երկրում նախագահում էր Արգենտինայի առաջին կին նախագահը՝ Իսաբել Մարտինես դե Պերոնը. հեղաշրջման արդյունքում 1974 թվականին նա հեռացվեց պաշտոնից¹:

Երկրում քաղաքական իրավիճակը գնալով սրվում էր, այդ ընթացքում երկիրը անընդհատ փոխում էր իր նախագահներին, արդյունքում 1983 թվականին ժողովրդավարական ընտրությունների շնորհիվ իշխանության եկավ Ռադիկալ քաղաքացիական միության թեկնածուն՝ Ռաուլ Ալֆոնսինը: Այսպիսով՝ վերջ դրվեց բռնապետական կարգերին, և իշխանությունները ձևավորվեցին ժողովրդավարական սկզբունքներով: Ստեղծված իրավիճակը կայունացնելու և ռազմական հեղաշրջման կազմակերպիչներին սանձելու նպատակով նախագահ Իսաբել Մարտինես դե Պերոնը բանակի միջնորդությամբ կազմակերպեց «կեղտոտ պատերազմ» բոլոր նրանց դեմ, ովքեր համարվում էին պետության «քայքայիչ տարրերը»²:

1989 թվականին ընտրությունների արդյունքում նախագահ դարձավ Կառլոս Մաուլ Մենեմը: Մենեմը ընտրվեց նախագահ խոր ճգնաժամի ժամանակ և միանգամից ձեռնարկեց բարեփոխման ծրագրեր: Նա ակտիվորեն իրականացնում էր տնտեսության ազատականացման ծրագրեր³:

Արգենտինայի Հանրապետությունը ժամանակին գտնվել է Եվրոպայի զարգացած երկրների հետ նույն մակարդակի վրա: Սակայն ոչ ճիշտ քաղաքականության և արտաքին ազդեցության պատճառով այս երկիրը հաճախ է հայտնվում տնտեսական ճգնաժամի մեջ՝ բախվելով բազմաթիվ խնդիրների՝ կապված կոռուպցիոն բարձր մակարդակի, արտաքին պարտքի ավելացման, արժույթի արժեզրկման հետ:

Գրեթե մի ամբողջ տասնամյակ՝ սկսած 1990-ական թվականներից, Արգենտինայի Հանրապետությունը գերազանցել է Լատինական Ամերիկայի երկրների մեծամասնությանը իր տնտեսական աճով: Դրան նպաստել է արտաքին բարենպաստ միջավայրը՝ արտահանվող ապրանքների բարձ գները, ներդրումները, կապիտալի մուտքերը: Այնուամենայնիվ, այս իրավիճակը

¹ Rok Spruk. “The Rise and Fall of Argentina.” Mercatus Working Paper, Mercatus Center at George Mason University, Arlington, VA, 2018. p. 19.

² Georgi Ivanov, La Guerra Sucia – Argentina’s Dirty War, 2010, p. 6-7, https://www.academia.edu/35413009/La_Guerra_Sucia_Argentinas_Dirty_War

³ Juliana Bambaci, Tamara Saront and Mariano Tommasi, The Political Economy of Economic Reforms in Argentina, Policy Reform, 2002, Vol. 5(2), p. 78. <http://www1.worldbank.org/publicsector/decentralization/March2003Seminar/poleconofreformsinArg.pdf>

գլխիվայր շուռ եկավ, և Արգենտինայի տնտեսությունը սկսեց անկում ապրել, ինչը կապված էր ռուսական և ասիական ճգնաժամերի հետ¹:

Մրցունակության անկումը, աստիճանաբար կապիտալի մուտքի նվազումը հանգեցրեց ներդրումների ակտիվության կտրուկ վատթարացման, ինչն էլ հիմք հանդիսացավ երկրում երկարատև ռեցեսիայի (աստիճանական հետաճում): 1999-2000 թթ. ներդրումները կրճատվեցին 20 %-ով, իրական ՀՆԱ-ն 1999 թվականին նվազեց 3,5 %-ով, իսկ 2002 թվականին հասավ առավելագույնի՝ 11 %: Դրա հետ մեկտեղ պարենային արդյունաբերությունը «փլուզվեց»²:

Համաշխարհային տնտեսական կոնյունկտուրայի վատթարացումը և տնտեսության աստիճանաբար թուլացումը բացասաբար ազդեցին պետական բյուջեի վրա: Իրավիճակը էլ ավելի բարդացավ հարկային կառուցվածքային բարեփոխումներ չիրականացնելու և հարկային դաշտը ստեղծված իրավիճակին համապատասխանեցնելու պատճառով: Ավելին, նույն ժամանակահատվածում Արգենտինան ստիպված եղավ վճարել նախորդ տարիներին վերցված վարկերը, իսկ 2000 թվականին արտաքին պարտքի վճարումները կազմում էին պետական բյուջեի 15 %-ը³:

2000-ական թվականներին Արգենտինայի տնտեսությունը դեռ անկում էր ապրում՝ չնայած ավելի դանդաղ տեմպերով, քան 1999 թվականին⁴: 2001 թվականին տնտեսության վատթար վիճակը հանգեցրեց բանկային հաշիվների սառեցման: Բնակչությունը այլևս ի վիճակի չէր իրականացնել վարկային պարտավորությունները⁵: Ներկայացնենք պետության ՀՆԱ-ի տատանումները մինչև 2001 թվականի խոր ճգնաժամը գծապատկերի տեսքով:


¹ Пиекалнитс Анна, (2020). Доклад по проекту: Опыт выхода из кризисов последнего столетия и его уроки для наших дней на тему: Выход Аргентины из кризиса 1998-2002 годов, стр. 2 <https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>

² Пиекалнитс Анна, (2020). Доклад по проекту: Опыт выхода из кризисов последнего столетия и его уроки для наших дней на тему: Выход Аргентины из кризиса 1998-2002 годов, стр. 3 <https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>

³ Jiri Jonas, Argentina: The Anatomy of a Crisis. p. 13. <https://edz.bib.uni-mannheim.de/www-edz/pdf/zei/b02-12.pdf>

⁴ Jim Saxton, Argentina's economic crisis: Causes and cures //Testimony before the Joint Economic Committee of the United States Congress, June, 2003, p. 10.

⁵ Jim Saxton, Argentina's economic crisis: Causes and cures //Testimony before the Joint Economic Committee of the United States Congress, June, 2003. p. 12.



Գծապատկեր 1. Արգենտինայի ՀՆԱ-ն 1980-2003 թթ.¹

Պետության տնտեսության մեջ մեծ մասնաբաժին ունեւ արտաքին կապիտալը, և արտաքին ֆինանսավորման հնարավորությունը կորցնելը մեծ մարտահրավեր էր Արգենտինայի համար: Արգենտինական ճգնաժամի գլխավոր պատճառներից մեկը ներքին խնայողությունների ցածր մակարդակն էր, ինչը բնորոշ է նաև Լատինական Ամերիկայի երկրների մեծամասնությանը: Այդ երկրների համար երկար տարիներ ներքին ծախսերը ծածկելու միջոց են եղել արտաքին ներդրումները²: 2002 թվականին Արգենտինայի արտաքին պարտքը կազմում էր արդեն 134,3 մլրդ ԱՄՆ դոլար³:

Արգենտինան ապրել է պատմության մեջ ամենավատ տնտեսական և ֆինանսական ճգնաժամը: Արժույթը մի քանի շաբաթվա ընթացքում արժեզրկվեց մեկից մինչև ավելի քան երեք պետ դոլարի նկատմամբ: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով անկում ապրեց 20 %-ով, գործազուրկների թիվը ավելացավ 25 %-ով, իսկ աղքատության մակարդակը հասավ 55 %⁴-ի:

Այսպիսով՝ բանկերը դարձան ճգնաժամի գլխավոր կրողներից մեկը՝ կորցնելով իրենց ակտիվների մեծ մասը: Կառավարությունը որոշեց հին պարտքերը մարել նոր պարտքի հաշվին՝ ավելի թանկ ու բարձր տոկոսադրույքներով: Բացի այդ, բարձրացվեցին հարկերը և բանկային տոկոսադրույքները: Երկրում սկսվեց դեֆլյացիա (դրամաշնորհների քանակության

¹ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AR> (դիտման օրը՝ 09.07.2021)

² Пиекалнитс Анна, (2020). Доклад по проекту: Опыт выхода из кризисов последнего столетия и его уроки для наших дней на тему: Выход Аргентины из кризиса 1998-2002 годов, стр. 3-4 <https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>

³ Jim Saxton, Argentina's economic crisis: Causes and cures //Testimony before the Joint Economic Committee of the United States Congress, June, 2003. p. 6.

⁴ Miguel Kiguel, Argentina's 2001 economic and Financial Crisis: Lessons for Europe //Beyond Macroeconomic Policy Coordination Discussions in the G-20. 2011. p. 7: https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/06/11_argentina_kiguel.pdf

կրճատում), ռեցեսիան շարունակվում էր, և այս ամենը հանգեցրեց եկամուտների նվազման: Կառավարությունը է՛լ ավելի խստացրեց հարկային համակարգը, նվազեցրեց պետական աշխատողների աշխատավարձը, դրա հետ մեկտեղ լրջորեն բարձրացավ գործազրկության մակարդակը: Իրավիճակը գնալով անկառավարելի էր դառնում: Աշխատավարձերը չվճարելու, հաշիվների սառեցման հետևանքով բնակչությունը իրականացնում էր անհնազանդության ակցիաներ, մասնավորապես՝ «դատարկ կաթսաների երթը», սուպերմարկետների վրա հարձակումները, տաքսիների հրկիզումները և այլն¹:

Արգենտինական պետն շարունակում էր արժեզրկվել՝ դոլարի նկատմամբ 2002 թվականի հունիսին հասնելով 3,6:1 հարաբերակցության²:

Տնտեսության վերականգնումը սկսվեց 2002 թվականի օգոստոսից: Արգենտինայի ուշադրության առանցքում էր ազգային տնտեսության մրցունակության բարձրացման ուղիների որոնումը: Ճգնաժամից դուրս գալու համար կառավարությունը գերակա ուղղություն համարեց գյուղատնտեսության զարգացումը և ներքին արտադրության հաշվին բնակչության պահանջարկի բավարարումը: Գյուղատնտեսության զարգացումը հիմք հանդիսացավ Արգենտինայում ռեցեսիայի հաղթահարմանը: Ագրոարդյունաբերությունը գնալով ոտքի էր կանգնում, համաշխարհային շուկայում կրկին երևում էր արգենտինական արտադրանքը: Ասիական երկրներում ավելացավ արգենտինական գյուղատնտեսական արտադրանքների պահանջարկը, ինչն էլ նպաստեց արտահանվող ապրանքների գները բարձրացմանը: Նկատենք, որ այդ շրջանը համաշխարհային գների բարձրացման շրջան էր, որն էլ ստեղծեց բարենպաստ տնտեսական միջավայր և զգալիորեն բարելավեց Արգենտինայի դիրքը համաշխարհային ասպարեզում³: Արգենտինայի տնտեսության մեջ ագրոարդյունաբերությունը ապահովում է ավելացրած արժեքի մոտ 1/3 մասը⁴: Կարելի է ենթադրել, որ գյուղատնտեսությունը երկրի տնտեսության կայունացման հիմքն էր:

Ագրոարդյունաբերական ճյուղի զարգացման հետ մեկտեղ Արգենտինային ճգնաժամից օգնեց դուրս գալ նաև արտահանման ծավալների ավելացումը: Առևտրաշրջանառությունը մի քանի տարվա ընթացքում 2008 թվականին

¹ Пиекалнитс Анна, (2020). Доклад по проекту: Опыт выхода из кризисов последнего столетия и его уроки для наших дней на тему: Выход Аргентины из кризиса 1998-2002 годов, стр. 4 <https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>


² Семенов В. Л., Аргентина: испытание двумя кризисами // Ибероамериканские тетради, 2013, №. 1. с. 350.

³ Пиекалнитс Анна, (2020). Доклад по проекту: Опыт выхода из кризисов последнего столетия и его уроки для наших дней на тему: Выход Аргентины из кризиса 1998-2002 годов, стр. 5 <https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>

⁴ Аналитический центр при правительстве РФ, Виктория Павлюшина, Влада Бриллиантова, Бюллетень о текущих тенденциях мировой экономики 38, « Социально-экономическое развитие Аргентины», стр. 8 <https://ac.gov.ru/archive/files/publication/a/19846.pdf>

ավելացավ մոտ 86,6 %-ով, արդյունաբերությունը՝ 68,3 %-ով, ինչը նպաստեց աշխատատեղերի ավելացմանը, և երկրում գործազրկությունը նվազեց՝ կազմելով 8,5 %¹:

Միայն 2008 թվականին 2002 թվականի համեմատությամբ երկրում ՀՆԱ-ն ավելացավ գրեթե 369 %-ով՝ կազմելով 361,56 մլրդ ԱՄՆ դոլար²: Ավելին, Արգենտինայի Հանրապետությունը 2008 թվականի համաշխարհային ճգնաժամը շատ ավելի հեշտությամբ անցկացրեց, քան 2000-ականների ներքին ցնցումները: ՀՆԱ-ն նվազեց 5,9 %-ով, բայց 2010 թվականին տնտեսությունը գրանցեց 10,1 % տնտեսական աճ: Այս ճգնաժամից առավել տուժել էր գյուղատնտեսությունը: Հիմնականում կրճատվել էր սոյայի արտադրությունը, ինչը կապված էր արտաքին շուկայում դրա պահանջարկի նվազման հետ: Վերջին տարիներին էլ տնտեսական ցնցումներից զերծ չի մնացել երկիրը, սակայն էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, և կարելի է ասել, որ այդ ցնցումները բնորոշ են բոլոր ազատ առևտրաշրջանառությամբ երկրներին³: Գծապատկերի տեսքով ներկայացնենք 2000-ական թվականներից հետո ՀՆԱ փոփոխությունները:



Գծապատկեր 2: Արգենտինայի ՀՆԱ-ն 2002-2020 թվականներին ⁴

Արգենտինայի տնտեսության հիմնական խնդիրը շարունակում է մնալ արժույթի ինֆլյացիան, որը 2000-ական թվականներից մինչ օրս չի կարգա-

¹ Аналитический центр при правительстве РФ, Виктория Павлюшина, Влада Бриллиантова, Бюллетень о текущих тенденциях мировой экономики 38, “Социально-экономическое развитие Аргентины”, стр. 6 <https://ac.gov.ru/archive/files/publication/a/19846.pdf>

² <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AR> (դիտման օրը՝ 13.07.2021)

³ Аналитический центр при правительстве РФ, Виктория Павлюшина, Влада Бриллиантова, Бюллетень о текущих тенденциях мировой экономики 38, “Социально-экономическое развитие Аргентины”, стр. 7 <https://ac.gov.ru/archive/files/publication/a/19846.pdf>

⁴ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AR>

վորվում: Ինֆլյացիայի հիմնական պատճառը պետոյի անընդհատ արժեգրկումն է. 2018 թվականին այն արժեգրկվել է մոտ 45.5 %-ով: Բայց և այնպես Արգենտինայի կենտրոնական բանկը նախատեսում է մինչև 2022 թվականը ինֆլյացիայի մակարդակը իջեցնել մինչև 5 %, իսկ թե որքանով դա կհաջողվի՝ դժվար է կանխատեսել¹:

Այսօր Արգենտինան համարվում է ագրարային-ինդուստրիալ երկիր, որն իր դերը ունի համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքների արտահանման շուկայում: Արգենտինան գրավում է առաջին տեղերից մեկը հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես՝ ցորենի արտահանմամբ երկրների մեջ²: Սոյայի արտահանմամբ զբաղեցնում է երրորդ տեղը ամբողջ աշխարհում: Ագրոարդյունաբերական համալիրի մեջ իր ուրույն դերն ունի անասնաբուծությունը: Արգենտինան համարվում է մսի և մսամթերքի շուկայի խոշորագույն արտադրող և արտահանող երկրներից մեկը և երկար տարիներ այդ շուկայում զբաղեցնում է առաջնային դիրքեր³: Կիսաֆաբրիկատային մսամթերքների գծով աշխարհում զբաղեցնում է 2-րդ տեղը, իսկ տավարի մսի արտահանման գծով՝ 6-րդ⁴:

Ելնելով վերոնշված վերլուծություններից՝ կարող ենք եզրակացնել, որ Արգենտինան տեղական արտադրանքի հաշվին գրեթե ամբողջությամբ բավարարում է իր բնակչության պարենի պահանջարկը:

Դեպի արտասահմանյան շուկաներ առաջխաղացման համար արգենտինական գյուղմթերքների շարքում առանձնացվում են միսն ու մսամթերքը, կաթի փոշին, մրգահյութերը, կերային կուլտուրաները, բուսական յուղը և այլն: Արտաքին շուկաներում լայն պահանջարկ ունեն նաև վնասատուների դեմ պայքարի միջոցները, դեղամիջոցները, թունաքիմիկատները, գյուղտեխնիկան և այլն⁵:

Հոդվածում կատարված վերլուծությունները թույլ են տալիս Հայաստանի տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության համար կատարել դիտարկումներ:

Չուզահեռներ անցկացնելով Հայաստանի Հանրապետության հետ՝ կարող ենք ասել, որ երկու երկրների տնտեսության համար գյուղատնտեսությունը առանցքային կարևորություն ունի: Հատկանշական է, որ երկու

¹ Аналитический центр при правительстве РФ, Виктория Павлюшина, Влада Бриллиантова, Бюллетень о текущих тенденциях мировой экономики 38, «Социально-экономическое развитие Аргентины», стр. 7.

² Аналитический центр при правительстве РФ, Виктория Павлюшина, Влада Бриллиантова, Бюллетень о текущих тенденциях мировой экономики 38, « Социально-экономическое развитие Аргентины», стр. 10.

³ Кокорев Виктор Михайлович, Внешнеэкономическая стратегия Аргентины и перспективы российско – аргентинского торгово-экономического сотрудничества, Москва, 2017, стр. 39.

⁴ Նույնը, էջ 54:

⁵ Նույնը, էջ 77:

երկրների համար էլ անփոխարինելի նշանակություն ունի հացահատիկային մշակաբույսերի մշակությունը:

Բայց ի տարբերություն Արգենտինայի՝ Հայաստանը ոչ միայն չի արտահանում հացահատիկային մշակաբույսեր, այլ նաև չի կարողանում սեփական արտադրության հաշվին ապահովել այդ մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի անգամ 50 %-ը¹: Իսկ 2020 թվականին տեղի ունեցած Արցախյան երկրորդ պատերազմի և դրա հետևանքով կորսված տարածքների պատճառով այս խնդիրն էլ ավելի է բարդացել: Ադրբեջանական տիրապետության տակ անցած Հադրութի, Շահումյանի, Քաշաթաղի շրջաններում էր գտնվում հացահատիկային մշակաբույսերի գրեթե 47,4 տոկոսը: Արցախը զրկվեց իր հացահատիկային բերքի մոտ 67,4 %-ից: Եվ քանի որ հացահատիկի արցախյան բերքի զգալի մասը մատակարարվում է ՀՀ, ստացվում է այնպես, որ Հայաստանը բախվում է պարենային անվտանգության ապահովման և հացահատիկի համար նոր մատակարարներ փնտրելու խնդիրներին²:

Հայաստանը 2019 թվականին կարողացել է ապահովել ցորենի պարենային ինքնաբավության ընդամենը 25,9 %-ը³: Այս առումով առաջարկվում է հետևել Արգենտինայի օրինակին՝ զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանը, թարմացնել գյուղատնտեսական տեխնիկան, ներմուծել բարձրորակ ցորենի սերմացու և չօգտագործվող հողատարածքների հաշվին ավելացնել հացահատիկային մշակաբույսերի, հատկապես ցորենի ցանքատարածությունները:

Արգենտինայի գյուղատնտեսության զարգացման առանձնահատկություններից է ագրարային կոոպերատիվների լայն կիրառումը: Այդպիսի կոոպերատիվները զբաղվում են և՛ արտադրանքի արտադրությամբ, և՛ իրացմամբ⁴: Գյուղատնտեսությամբ զբաղվողները միասին ստեղծում են կոոպերատիվներ: Այստեղ հացահատիկային կոոպերատիվները առաջին տեղն են զբաղեցնում, դրանց հաջորդում են խոշոր եղջերավոր անասունների և կաթնամթերքների գծով կոոպերատիվները⁵:

Ի տարբերություն Արգենտինայի՝ Հայաստանին բնորոշ են փոքր և կտրտված գյուղատնտեսական տարածքները, ինչը խոչընդոտում է գյուղա-

¹ ՀՀ ԱՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, https://armstat.am/file/article/f_sec_1_2021_3..pdf

² Աննա Փախլոյան, Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանագատումից» հետո. 2020 թ., էջ 16-17 <https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%206.pdf>

³ ՀՀ ԱՎԿ https://armstat.am/file/article/f_sec_1_2021_3..pdf (նիսվել է 13.07.2021)

⁴ Edith Obschatko, Carlos Basañes y Guillermo Martini, Las cooperativas agropecuarias en la República Argentina, 2011, p. 1.

⁵ Նույնը, էջ 2:

տնտեսության զարգացմանը¹: Այս խնդրի լուծման համար առաջարկվում է հետևել Արգենտինայի օրինակին՝ նպաստել գյուղացիական կոոպերատիվների ստեղծմանը և գյուղատնտեսությունը վարել մեծ հողատարածքներում: Արգենտինայի գյուղատնտեսության զարգացման նորարարական մոտեցումներից է առցանց ագրոխորհրդատվության տրամադրումը: Օնլայն հարթակը հասանելի է Արգենտինայի Հանրապետության վիճակագրության և մարդահամարի ազգային ինստիտուտի կայքէջում²: Այդ հարթակի միջոցով գյուղատնտեսությամբ զբաղվողները խորհրդատվություն են ստանում մասնագետների կողմից: Նրանց հարց ու պատասխանները արխիվացվում են և հասանելի են դառնում բոլորին: Առաջարկվում է այս նորարարական մոտեցումը կիրառել նաև Հայաստանում:

Գիտական նորույթ: Արգենտինայի տնտեսական առաջընթացը ապահովող ուղիների ուսումնասիրությունների և վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտվել են Արգենտինայի գյուղատնտեսության արդյունավետ զարգացումն ապահովող նորարարական մոտեցումներ ու մեխանիզմներ (ագրոխորհրդատվական առցանց հարթակը, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը), որոնց կիրառությունը թույլ կտա լուծել ՀՀ գյուղատնտեսության առջև ծառայած որոշ խնդիրներ:

Եզրակացություններ: Ուսումնասիրելով Արգենտինայի Հանրապետության տնտեսական էվոլյուցիան, վերլուծելով ներքին ցնցումները, ճգնաժամերը, տնտեսության առանձնահատկությունները՝ կարող ենք կատարել մի շարք եզրակացություններ:

- Արգենտինան զբաղեցնում է երրորդ տեղը Լատինական Ամերիկայի տնտեսապես զարգացած երկրների ցանկում, իսկ ՀՆԱ-ի մակարդակով՝ 21-րդը ամբողջ աշխարհում:
- 2000-ական թվականներին Արգենտինան ապրեց դարի և իր պատմության ամենախոր ճգնաժամը, որից մի շարք ֆինանսական ոլորտներ դեռ չեն կարողացել լիարժեք դուրս գալ: Պետության արժույթը՝ պետն, դեռևս շարունակում է արժեզրկվել: Բանկային համակարգը լիարժեք ոտքի չի կանգնել: Սակայն կան ոլորտներ, որոնց շնորհիվ Արգենտինան այսօր էլ համարվում է զարգացած երկրներից մեկը: Այդ ոլորտներից մեկը գյուղատնտեսությունն է:
- Արգենտինային ճգնաժամը օգնեց հաղթահարել մի կարևոր գործոն՝ տեխնոլոգիական նորարարությունների ներդրումը ամբողջ տնտեսության մեջ, մասնավորապես՝ գյուղատնտեսության: Այստեղ գյուղատնտեսություն-

¹ Կոոպերատիվների գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական դաշտի ուսումնասիրություն, 2014 թ, էջ 74
http://www.arspiu.am/fileadmin/user_upload/photogalleries/Coop_Study/Report_arm.pdf

² Instituto Nacional de Estadística y Censos Republica Argentina
https://consultascna2018.indec.gob.ar/?_ga=2.258275722.1612976607.1626329243-360828810.1626329243

նը հիմնականում հենված է արտահանման զարգացման վրա: Արգենտինան գյուղատնտեսական արտադրանքների արտահանման համաշխարհային շուկայում զբաղեցնում է առաջնային դիրքերը և գին թելադրող երկրներից մեկը:

Գյուղատնտեսության մեջ Արգենտինայի փորձից Հայաստանի համար առաջարկում ենք.

- թարմացնել գյուղատնտեսական տեխնիկական բազան, ներմուծել Արգենտինայից բարձրորակ և բարձր արժեք ապահովող հացահատիկային, մասնավորապես՝ ցորենի սերմացուներ և ցորենի ինքնաբավության մակարդակը բարձրացնել 50 % և ավելի,
- ագրոարդյունաբերական ճյուղի եկամտաբերության բարձրացման համար առաջարկվում է նպաստել կոոպերատիվների ստեղծմանը,
- ագրարային խորհրդատվության զարգացման համար ստեղծել օնլայն խորհրդատվական հարթակ, որտեղ գյուղատնտեսությամբ զբաղվողները հնարավորություն կունենան իրենց հարցերը ուղղել մասնագետներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աննա Փախլոյան, Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանագատումից» հետո. 2020 թ., էջ 13-21
<https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%206.pdf>
2. Կոոպերատիվների գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական դաշտի ուսումնասիրություն, 2014 թ., էջ 103
http://www.arspiu.am/fileadmin/user_upload/photogalleries/Coop_Study/Report_arm.pdf
3. Аналитический центр при правительстве РФ, Виктория Павлюшина, Влада Бриллиантова, Бюллетень о текущих тенденциях мировой экономики 38, «Социально-экономическое развитие Аргентины», стр. 20
<https://ac.gov.ru/archive/files/publication/a/19846.pdf>
4. Г.Н. Вачнадзе, Деловая Аргентина, том III. Экономика и связи с Россией в 2002-03 гг/ 2004, стр. 29
5. Евразийская экономическая комиссия, Департамент агропромышленной политики, Анализ барьеров доступа сельскохозяйственных товаров на рынок стран Южной Америки, Москва, 2015, стр. 24
6. К.Е. Плотникова, Экономическое развитие Аргентины в рамках МЕРКОСУР/ 2017, стр. 69
7. Кокорев Виктор Михайлович, Внешнеэкономическая стратегия Аргентины и перспективы российско – аргентинского торгово–экономического сотрудничества, Москва, 2017, стр. 261
8. Пиекалнитс Анна, (2020). Доклад по проекту: Опыт выхода из кризисов последнего столетия и его уроки для наших дней на тему: Выход Аргентины

- из кризиса 1998-2002 годов, стр. 10
<https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>
9. Р. Кортес-Конде, Экономический кризис в Аргентине: причины и последствия // Экономическая история. Обзорение / Под ред. Л.И.Бородкина. Вып. 10. М., 2005, с. 180-182 (Постраничные примечания)
 10. Семенов В. Л., Аргентина: испытание двумя кризисами // Ибероамериканские тетради, 2013, № 1, с. 349-360
 11. Edith Obschatko, Carlos Basañes y Guillermo Martini, Las cooperativas agropecuarias en la República Argentina, 2011, p. 3
 12. Georgi Ivanov, La Guerra Sucia – Argentina’s Dirty War, 2010, p.23
 13. Jim Saxton, Argentina’s economic crisis: Causes and cures //Testimony before the Joint Economic Committee of the United States Congress, June. 2003, 58 p.
 14. Jiri Jonas, Argentina: The Anatomy of a Crisis. p. 43
 15. Juliana Bambaci, Tamara Saront and Mariano Tommasi, The Political Economy of Economic Reforms in Argentina, Policy Reform, 2002, Vol. 5(2), p.75-88
 16. Miguel Kiguel, Argentina’s 2001 economic and Financial Crisis: Lessons for Europe //Beyond Macroeconomic Policy Coordination Discussions in the G-20. 2011, p. 7-9
 17. Rok Spruk, “The Rise and Fall of Argentina.” Mercatus Working Paper, Mercatus Center at George Mason University, Arlington, VA, 2018. p. 74
 18. Instituto Nacional de Estadística y Censos Republica Argentina
https://consultascna2018.indec.gob.ar/?_ga=2.258275722.1612976607.1626329243-360828810.1626329243
 19. ՀՀ ԱՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն,
https://armstat.am/file/article/f_sec_1_2021_3..pdf
 20. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AR> (դիտումս որը 13.07.2021)

References

1. Anna P'axloyan, Arcaxi tntesakan nerowjhy' «nor sahmanazatowmic» heto. 2020 t', e'j 13-21
<https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%206.pdf>
2. Kooperativneri gorc'owneowt'yowny' kargavorogh Hayastani
 Hanrapetowt'yownowm gorc'ogh iravakan dashti owsowmnasirowt'yown, 2014 t', e'j 103
http://www.arspiu.am/fileadmin/user_upload/photogalleries/Coop_Study/Report_arm.pdf
3. Analiticheskij centr pri pravitel'stve RF, Viktorija Pavljushina, Vlada Brilliantova, B'ulleten' o tekushhah tendencijah mirovoj jekonomiki 38, « Social'no-jekonomicheskoe razvitie Argentiny», str. 20
<https://ac.gov.ru/archive/files/publication/a/19846.pdf>

4. G.N. Vachnadze, Delovaja Argentina, tom III. Jekonomika i svjazi s Rossiej v 2002-03 gg/ 2004, str. 29
5. Evrazijskaja jekonomicheskaja komissija, Departament agropromyshlennoj politiki, Analiz bar'erov dostupa sel'skoho zjajstvennyh tovarov na rynek stran Juzhnoj Ameriki, Moskva, 2015, str. 24
6. K.E. Plotnikova, Jekonomicheskoe razvitie Argentiny v ramkah MERKOSUR/ 2017, str. 69
7. Kokorev Viktor Mihajlovich, Vneshnejekonomicheskaja strategija Argentiny i perspektivy rossijsko – argentinskogo torgovo–jekonomicheskogo sotrudnichestva, Moskva, 2017, str. 261
8. Piekal'nits Anna, (2020). Doklad po proektu: Opyt vyhoda iz krizisov poslednego stoletija i ego uroki dlja nashih dnei na temu: Vyhod Argentiny iz krizisa 1998-2002 godov, str. 10 <https://cceis.hse.ru/pubs/share/direct/422395569.pdf>
9. R. Kortés-Konde, Jekonomicheskij krizis v Argentine: prichiny i posledstvija // Jekonomicheskaja istorija. Obozrenie / Pod red. L.I.Borodkina. Vyp. 10. M., 2005, s. 180-182 (Postranichnye primechanija)
10. Semenov V. L. Argentina: ispytanie dvumja krizisami // Iberoamerikanskije tetradi, 2013, # 1, s. 349-360
11. Edith Obschatko, Carlos Basañes y Guillermo Martini, Las cooperativas agropecuarias en la República Argentina, 2011, p. 3
12. Georgi Ivanov, La Guerra Sucia – Argentina's Dirty War, 2010, p. 23, https://www.academia.edu/35413009/La_Guerra_Sucia_Argentinas_Dirty_War
13. Jim Saxton, Argentina's economic crisis: Causes and cures // Testimony before the Joint Economic Committee of the United States Congress, June, 2003, 58 p.
14. Jiri Jonas, Argentina: The Anatomy of a Crisis. p. 43
15. Juliana Bambaci, Tamara Saront and Mariano Tommasi, The Political Economy of Economic Reforms in Argentina, Policy Reform, 2002, Vol. 5(2), p.75-88
16. Miguel Kiguel, Argentina's 2001 economic and Financial Crisis: Lessons for Europe // Beyond Macroeconomic Policy Coordination Discussions in the G-20. 2011, p. 7-9: https://www.brookings.edu/wpcontent/uploads/2016/06/11_argentina_kiguel.pdf:
17. Rok Spruk, "The Rise and Fall of Argentina." Mercatus Working Paper, Mercatus Center at George Mason University, Arlington, VA, 2018. page 74
18. Instituto Nacional de Estadística y Censos Republica Argentina https://consultascna2018.indec.gob.ar/?_ga=2.258275722.1612976607.1626329243-360828810.1626329243
19. HH AVK, Parenayin apahovowt'yown & aghqatowt'yown, https://armstat.am/file/article/f_sec_1_2021_3..pdf
20. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=AR> (ditman o'ry' 13.07.2021)

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅՐ. ՎԵՐԵԼՔՆԵՐԻ ՈՒ
ՎԱՅՐԷԶՔՆԵՐԻ ՈՒՂԻՆ

ՄԵՐԻ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Համառոտագիր: Հոդվածում ներկայացված են Արգենտինայի Հանրապետության տնտեսության առանձնահատկությունները, տնտեսական վերելքներն ու վայրէջքները: Հիմնական ուշադրությունը դարձվել է 2000-ական թվականների ներքին ցնցումների, անկումների վրա, և թե ինչպես պետությունը դուրս եկավ այդ աղետալի վիճակից: Հոդվածում ներկայացվել է նաև, թե որ ոլորտները նպաստեցին այդ ճգնաժամի հաղթահարմանը, և երկրի դինամիկ զարգացմանը:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արգենտինայի տնտեսության առանձնահատկությունները, գտնել նրա ուժեղ կողմերը, որոնք ապահովում են տնտեսության զարգացումը, և կատարել առաջարկություններ Հայաստանում դրանց տեղայնացման համար: Խնդիր է դրվել վերլուծել Արգենտինայի տնտեսական զարգացման էվոլյուցիան, բացահայտել տնտեսության առավել զարգացած ճյուղերը և կատարված ուսումնասիրությունների հիման վրա գտնել Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված նոր ուղիներ:

Արգենտինայի տնտեսության պատմատրամաբանական, վիճակագրական մեթոդների հիման վրա կատարված վերլուծությունները ցույց տվեցին, որ երկրի տնտեսությունը կախվածություն ունի արտասահմանյան կապիտալից և փորձում է քայլեր ձեռնարկել այդ կախվածությունը նվազեցնելու համար:

Այս պետությունը մտել է համաշխարհային պատմության մեջ՝ որպես անարդյունավետ տնտեսական քաղաքականություն վարած երկրներից մեկը: Պոպուլիզմը, գնաճը, դեֆոլտները և բիզնեսի վրա հարկային ճնշումները Արգենտինան դարձրել էին «բացասական օրինակ», բայց երկիրը կարողացավ գտնել իր զարգացման ուղին և ոտքի կանգնեցրեց տնտեսությունը:

Գիտական նորույթը: Արգենտինայի տնտեսական առաջընթացը ապահովող ուղիների ուսումնասիրությունների և վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտվել են Արգենտինայի գյուղատնտեսության արդյունավետ զարգացումն ապահովող նորարարական մոտեցումներ ու մեխանիզմներ (ազրոխորհրդատվական առցանց հարթակը, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը), որոնց կիրառությունը թույլ կտա լուծել ՀՀ գյուղատնտեսության առջև ծառայած որոշ խնդիրներ:

Հոդվածում համակարգված տեսքով ներկայացնելով Արգենտինայի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները՝ հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ Արգենտինան զարգացած ագրարային-ինդուստրիալ հանրապետություն է, որը կարող է վառ օրինակ ծառայել ագրարային ուղղվածություն ունեցող երկրների գյուղատնտեսության զարգացման համար: Այս եզրահանգման հիման վրա հոդվածում ներկայացվել են Հայաստանի գյուղատնտեսության մեջ Արգենտինայի փորձի տեղայնացման հնարավորությունները: Վերջիններիս կիրառման դեպքում հնարավոր կլինի բարձրացնել հացա-

հատիկային մշակաբույսերի բերքատվությունը, ունենալ զարգացած ագրոխորհրդատվական բազա և, ի վերջո, զարգացած գյուղատնտեսություն:

Բանալի բառեր՝ Արգենտինայի Հանրապետություն, ճգնաժամ, տնտեսության վերականգնում, ինֆլյացիա, գյուղատնտեսություն, հացահատիկային մշակաբույսեր, նորարարություն, ագրոխորհրդատվություն

ЭКОНОМИЧЕСКИЙ ПРОГРЕСС АРГЕНТИНЫ. ПУТЬ ПОДЪЕМОВ И СПУСКОВ

МЕРИ МУРАДЯН

Аннотация. В статье представлены особенности экономики Республики Аргентина, его экономические взлеты и падения. Основное внимание было уделено внутренним потрясениям и спадам 2000-х годов и тому, как страна вышла из этой катастрофической ситуации. В статье также были представлены сферы, которые способствовали выходу из кризиса и динамичному развитию страны.

Цель данной статьи - изучить особенности экономики Аргентины, найти ее сильные стороны, обеспечивающие ее развитие, и дать рекомендации по их локализации в Армении. Поставлена задача проанализировать эволюцию экономического развития Аргентины, выявить наиболее развитые отрасли экономики и на основе проведенных исследований найти новые пути развития экономики Армении.

Анализ экономики Аргентины, основанный на историко-логических, статистических методах, показал, что экономика страны зависит от иностранного капитала и пытается предпринять шаги для уменьшения этой зависимости.

Эта страна вошла в мировую историю как одна из стран, проводящих неэффективную экономическую политику. Популизм, инфляция, дефолты и налоговое давление на бизнес сделали Аргентину «отрицательным примером», но страна смогла найти свой путь к развитию и восстановил свою экономику.

Научная новизна. По результатам исследования и анализа способов обеспечения экономического прогресса Аргентины были выявлены инновационные подходы и механизмы (онлайн-платформа агроконсалтинга, применение инновационных технологий), обеспечивающие эффективное развитие сельского хозяйства Аргентины, использование которых поможет решить некоторые проблемы, стоящие перед сельским хозяйством РА.

В статье на систематической основе представлены особенности сельского хозяйства Аргентины, считался разумным вывод о том, что Аргентина является развитой аграрно-индустриальной республикой, которая может служить ярким примером развития сельского хозяйства в аграрно-ориентированных странах.

Исходя из этого видения, в статье представлены возможности локализации аргентинского опыта в сельском хозяйстве Армении. В случае использования последнего можно будет повысить урожайность зерновых культур, иметь развитую агроконсультационную базу и, наконец, развитое сельское хозяйство.

Ключевые слова: Аргентинская Республика, кризис, восстановление экономики, инфляция, сельское хозяйство, зерновые культуры, инновации, агроконсалтинг

ARGENTINA'S ECONOMIC PROGRESS. PATH OF ASCENTS AND DESCENTS

MERY MURADYAN

Abstract: The article presents the features of the economy of the Republic of Argentina, its economic ups and downs. The focus was on the internal shocks and recessions of the 2000s and how the country got out of this disastrous situation. The article also presented the areas that contributed to the recovery from the crisis and the dynamic development of the country.

The purpose of this article is to study the peculiarities of the Argentine economy, find its strengths that ensure its development, and give recommendations for localization in Armenia. The task is to analyze the evolution of the economic development of Argentina, to identify the most developed sectors of the economy and, on the basis of the research carried out, to find new ways of developing the Armenian economy.

Analysis of the Argentine economy, based on historical, logical, statistical methods, showed that the country's economy depends on foreign capital and is trying to take steps to reduce this dependence.

This country went down in world history as one of the countries pursuing ineffective economic policies. Populism, inflation, defaults and tax pressures on business made Argentina a “bad example,” but the country was able to find its own path to development and rebuilt its economy.

Scientific novelty. Based on the results of the study and on analysis of the ways that ensure economic progress in Argentina, innovative approaches and mechanisms (online agro-consulting platform, application of innovative technologies) were identified that ensure the effective development of agriculture in Argentina, the use of which will help to solve some of the problems facing the agriculture of the Republic of Armenia.

The article systematically presents the features of agriculture in Argentina, it was considered reasonable to conclude that Argentina is a developed agro-industrial republic, which can serve as a vivid example of the development of agriculture in

agrarian-oriented countries. Based on this vision, the article presents the possibilities of localizing the Argentine experience in the agriculture of Armenia. If the latter is used, it will be possible to increase the yield of grain crops, have a developed agricultural consulting base and, finally, a developed agriculture.

Keywords: Argentine Republic, crisis, economic recovery, inflation, agriculture, crops, innovation, agro-consulting